

ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ *ժ/ձ, *ծ/զ, *ժ/զ ՀԵՐԹԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐՍԵՎՐՈՐՈՒՄԸ
ՍԱՆՍԿՐԻՏՈՒՄ

Ինչպես հայտնի է հ.-ե. թ, ծ, ժ ծայնավորները սանսկրիտում հավասարապես դարձել են ձ, իսկ հ.-ե. ձ-ն տվել է սանսկ. ի: Համապատասխանաբար, հ.-ե. թ/ձ, ծ/զ, ժ/զ հերթագայություններն էլ սանսկրիտում դրսևորվել են որպես ձ/i հերթագայություն¹: Այդ դեպքում, սակայն, մտածելու տեղիք է տալիս այն հանգամանքը, թե ինչու հ.-ե. ձ-ից ծագող սանսկ. i-ն ամենագործածական ձա «տալ» < հ.-ե. *dō-, dhā «դնել», հ.-ե. *dhē- բայարմատներից կազմված կրկնավոր ներկայի խոնարհման ձևերում ընդհանրապես բացակայում է, մինչդեռ mā «չափել» < հ.-ե. mē-, śā «սրել» < *kō- և այլ բայարմատներից կազմված համապատասխան ձևերում բաղաձայնով սկսվող վերջավորություններից առաջ օրինաչափ կերպով հանդես է գալիս որպես i (հմմտ. մի կողմից՝ սանսկ. եզ. III դ. dadāti, dadhāti ձևերի դիմաց հոգ. I դ. dad-mas, dadh-mas և այլն, մյուս կողմից՝ եզ. III դ. mīmāṣi, jāhāti – ձևերի դիմաց. հոգ. I դ. mīmāṣas, jāhīmas և այլն ձևերը)²: Հ.-ե. ձ-ից ծագող սանսկ. i-ի նույն դիրքում ունեցած այդ երկակի դրսևորման և դրանով իսկ ձ/i հերթագայությանը զուգահեռ ձ/զրո հերթագայության առաջացման հարցը քննելիս պետք է նկատի ունենալ երեք կարևոր հանգամանք.

1) Հ.-ե. ձ-ն բառամիջի վանկում թեև ընկել է ցեղակից մի շարք լեզուներում, բայց պահպանվել է սանսկրիտում, հունարենում, լատիներենում:

2) Զայնավորից առաջ *ձ-ն չի պահպանվել հ.-ե. ոչ մի լեզվում³:

3) Բառային բարդությունների դեպքում բառամիջում հ.-ե. ձ-ն սանսկրիտում նույնպես ընկել է, եթե *ձ պարունակող վանկը պատկանելիս է եղել

¹ St'u O.Szemerényi, Einführung in die vergleichende Sprachwissenschaft, Darmstadt 1970, էջ 31-34, 82:

² Հ.-ե. ձ-ից ծագող սանսկ. i-ի փոխարեն հաճախ հանդես է գալիս երկար i ծայնավոր. St'u A.Meillet, Introduction à l'étude comparative des langues indoeuropéennes, Paris, 1908, էջ 98, 182, K.Brugmann, Grundriss der vergleichenden Grammatik der indogermanischen Sprachen, Bd. II, Teil III, Strassburg, 1916, էջ 154:

³ St'u A.Meillet, նշվ. աշխտ., էջ 72-73:

բարդության երկրորդ բաղադրիչին և գտնվել է երկու շեշտերի միջև⁴։ Կ.Բրուգմանը վերջին օրինաչափությամբ էլ հենց բացատրում է սանսկ. կրկնավոր ներկայի ձևերում հ.–ե. ձ-ի բացակայությունը։ Նա բերում է մի շարք փաստարկներ և փորձում է ցույց տալ, որ բայական կրկնությունը նախապես նույնպիսի ինքնուրույնություն է ունեցել, ինչպես երկբաղադրիչ բարդությունների առաջին անդամը և ըստ այդմ՝ առանձին շեշտ է կրել⁵։ Սակայն Բրուգմանը այդ ձևով մեկնաբանելով *dad-mas* և այլն ձևերում հ.–ե. ձ-ից ծագող սանսկ. *i*-ի բացակայությունը, չի խոսում այն մասին, թե ինչպես պետք է բացատրել *jahimas*, *mimīmas* և այլն ձևերում հ.–ե. նույն ձ-ից ծագող սանսկ. *i*-ի առկայությունը։ Ընդհակառակն, Ա.Մեյեն սանսկ. հոգ. III դ. *dad-atī*-ն համարում է ծայնավորից առաջ հ.–ե. ձ-ի անկմամբ առաջացած ձև և գտնում, որ հուն. հոգ. I դ. *διδό-μεν* ձևի դիմաց առկա սանսկ. հոգ. I դ. *dad-mas*. ձևը (փոխ. սպասելիք *dadi-mas*-ի –Ա.վելտյան) առաջացել է հոգ. III դ. *dad-atī* ձևի համաբանությամբ։ Միևնույն ժամանակ Մեյեն հուն. ատտիկյան հոգ. III դ. *διδό-ασι* – ձևը դիտում է որպես համաբանական նորակազմություն⁶։ Այդպես էլ նա գտնում է, որ հ.–ե. *piē* «լցնել» արմատի հերթագայության ստորին աստիճանի ձևից է ծագում սանսկ. հոգ. III դ. *pi-pr-atī* «լցնում են» ձևը (դարձյալ ծայնավորից առաջ հ.–ե. ձ-ի անկմամբ – Ա.վելտյան), որից էլ միավանկ արմատների համաբանությամբ (հմմտ. հ.–ե. **bher* «բերել» արմատից սանսկ. եգ. III դ. *bibharti* և հոգ. III դ. *bibhr-atī* – Ա.վելտյան), կազմվել է սանսկ. լիաձայն աստիճանի եգ. III դ. *pi-par-ti* «լցնում է» ձևը⁷։ Սակայն Ա.Մեյեն սանսկ. *dad-mas* ձևում **ձ-ից* ծագող *i*-ի բացակայությունը համարելով համաբանության արդյունք, բոլորովին չի էլ անդրադառնում այդ հարցի մասին Կ.Բրուգմանի վերոհիշյալ տեսակետին և այդ դիրքում հ.–ե. ձ-ի պահպանվելու փաստարկներ չի բերում։ Սանսկրիտական կրկնավոր ներկայի ձևերում *i*-ի առկայության և բացակայության հարցը բոլորովին այլ տեսանկյունից է փորձում մեկնաբանել Թ.Բարրոուն։ Նա ընդհանրապես ժխտում է հ.–ե. ձ-ի գոյությունը և չի ընդունում այնպիսի ակնհայտ ծագումնաբանական համապատասխանությունները, ինչպիսիք են սանսկ. *pitar* – հուն. *πατήρ*, սանսկ. *sthitiā* – հուն. *statos* և այլն։ Ըստ Բարրոուի, այդ բառերում սանսկ. *i*-ն ծագում է հ.–ե. *i*-ից և

⁴ St'u K.Brugmann, Grundriss..., Bd. I, Strassburg 1897, էջ 500-501, նույնի Kurze vergleichende Grammatik der indogermanischen Sprachen, Strassburg, 1904, էջ 143-144:

⁵ St'u K.Brugmann, Grundriss..., Bd. II, Teil III, Strassburg, 1916, էջ 22-23, Kurze vergleichende..., էջ 55, Anm.:

⁶ St'u A.Meillet, նշվ. աշխտ., էջ 133, А.Мейе, Введение в сравнительное изучение индоевропейских языков, – Л., 1938, էջ 179:

⁷ St'u A.Meillet, նշվ. աշխտ., 181, А.Мейе, նշվ. աշխտ., էջ 135:

պատկանում է ոչ թե արմատին, այլ վերջածանցին: Ուստի, նա, ասենք, սանսկ. *sthita*-ը տարալուծում է *sth-ita* բաղադրիչների և այլն: Միաժամանակ *Թ.Բարրոուն* գտնում է, որ սկզբնական երկար ծայնավորները ծայնդարձի ստորին աստիճանում լիովին դուրս են ընկնում, որի հետևանքով էլ *da* և *dha* արմատներից ունենց *dad-mas*, *dadh-mas* և այլն⁸: Այդ տեսակետից սանսկ. *jahl-mas* տիպի ձևերում *i*-ն համարվում է արմատի և վերջավորության միջև ներմուծված միացնող ծայնավոր⁹: Այդպես էլ սանսկ. երկվանկ (*set*) արմատների *i*-ն դիտելով որպես վերջածանց, նա գտնում է, որ, ասենք, *roditi*, *vamiti* և այլն ձևերը կառուցվածքային տեսակետից համապատասխանում են լատ. *i*-հիմքով *capio* (*capis*, *capit*, *capiant*) ձևերին¹⁰. Բայց թե ինչու այդ *-i*-վերջածանցը բաղաձայնից առաջ կանոնավոր կերպով պահպանվում է և բացակայում է միայն ծայնավորից առաջ (հմտ. սանսկ. ներկա եզ. III դ. *rodi-ti*, հոգ. I դ. *rud-i-mas*, ապառնի եզ. III դ. *rodi-śyati*, ինք. *rodi-tum*, դերբայ *rud-i-tā*, բայց ներկա հոգ. III դ. *rud-antī*), այն դեպքում երբ *h.-b.* *i*-ից ծագող սանսկ. *i*-ն ծայնավորից առաջ վերածվում է *y*-ի կամ, ըստ Ջիվերս-էդջերտոնի օրենքի, դառնում է *iy*, այդ հարցը Բարրոունին բուրրովին չի անհանգստացնում: Իրականում, ինչպես վերը տեսանք, այդպիսի հնչյունական պահվածքը բնորոշ է *h.-b.* *ə*-ին, և տվյալ դեպքում սանսկ. *rud-anti* ձևում. *-i*-ի բացակայության պատճառն այն է, որ սանսկ. *rodi/rudi* հերթագայության լիածայն և ստորին աստիճանները համապատասխանաբար ծագում են *h.-b.* **reuda*/*ruda* նախածններից¹¹: Ըստ այդմ, Բարրոունի վերոհիշյալ մեկնաբանությունը ընդունելի լինել չի կարող: Ինչպես սանսկ. *set* արմատների, այնպես էլ սանսկ. *sthita*, *dhitā* և այլն ձևերի *i*-ի *h.-b.* *ə*-ից ծագած լինելը ակնհայտ իրողություն է, և սանսկ. այդ *i*-ն այլ կերպ մեկնաբանել հնարավոր չէ¹²: Հետևաբար, սանսկ. *dadāmi* : *dadmas* և *jahāmi* : *jahimas* խոնարհման երկու տիպերի առաջացումը բացատրելիս մնում է ենթադրել, որ.

1) կամ օրինաչափ ձևը *jahimas* տիպն է (*h.-b.* *ə*-ի օրինաչափ պահպանումով), իսկ *dadmas* տիպը իրոք հոգ. III դ. ձևի համաբանությամբ է առաջացել,

2) կամ օրինաչափ. ձևը *dadmas* տիպն է (*h.-b.* *ə*-ի օրինաչափ անկումով), և ըստ այդմ *jahimas* տիպի ձևերում *i*-ն հետագա նորամուծություն է:

Լեզվական փաստերը ցույց են տալիս, որ *h.-b.* *ə*-ից ծագող սանսկ. *i*-ն վերաիմաստավորվելով տարածվել է իր սկզբնական սահմաններից դուրս: Այսպես,

⁸ St' u T. Baproy, Санскрит, М. 1976, էջ 100-101, 301):

⁹ St' u նույն տեղում, էջ 301-302:

¹⁰ St' u նույն տեղում, էջ 300):

¹¹ St' u A. Meillet, Introduction ..., էջ 170:

օրինակ՝ պերֆեկտի ձևերում բաղաձայնով սկսվող վերջավորությունների մի մասը, մասնավորապես եզ. II դ. *tha-*-ը հոգ. I դ. *mas-*-ը միջ. սեռ. եզ. II դ. *se-*-ը, հոգ. III դ. *re-*-ը, ծանր վանկ պարունակող բաղաձայնահանգ արմատներին կանոնավորապես կցվում են i ծայնավորի միջոցով¹³: Սաճսկ. այդ i-ն նախապես օրինաչափ կերպով ծագելով հ.-ե. *a-*-ից (հմմտ. հ.-ե. *stā* «կանգնել» արմատից սաճսկ. *tasthima*, *tasthire*, կամ հ.-ե. **pea* «թռչել» երկվանկ արմատից սաճսկ. *paptima* և այլն), հետագայում ըմբռնվել է որպես արմատը վերջավորությունների հետ միացնող ծայնավոր և համաբանությամբ տարածվել է այլ դեպքերի վրա (հմմտ. հ.-ե. *sek*^w «հետևել» միավանկ արմատից, որի միավանկությունը երևում է սաճսկ. ներկա եզ. III դ. *sišakti* աթեմատիկ ձևից, ունենց պերֆ. *sišcima*, *sišcire* և այլն համաբանությամբ կազմված ձևեր): Ընդ որում, կարծում ենք, հ.-ե. *a-*-ից ծագող սաճսկ. i-ի այդ վերաիմաստավորմանը պետք է նպաստեր ծայնավորից առաջ հ.-ե. *a-*-ի օրինաչափ անկմամբ, իսկ բաղաձայնից առաջ նրա օրինաչափ պահպանմամբ առաջացած հարաբերակից քերականական ձևերի առկայությունը: Այդ տեսակետից թվում է, թե սաճսկ. *jahimas* տիպի ձևերում նույնպես i-ն կարելի է հետագա համաբանական նորամուծություն համարել: Բայց դեռևս Ֆ. դե Սոսյուրը ժամանակին իր «Մեմուար...»-ի մեջ հ.-ե. երկար վանկարար ծայնորդների քննության բաժնում ցույց է տվել, որ հ.-ե. երկվանկ (*set*) արմատներից կազմված սաճսկ. *jajā-thas* : *jajani-ši*, *brū-thas* : *bravi-ši* ծայնդարձի ստորին և լիաձայն աստիճանները ներկայացնող երկ. II և եզ. II դդ. ձևերը միմյանց նկատմամբ ճիշտ նույնպիսի փոխհարաբերության մեջ են գտնվում, ինչպես սաճսկ. *rudi-thas* : *rodi-ši* երկ. II և եզ. II դդ. ձևերը¹⁴: Ըստ այդմ, հ.-ե. *a-*-ն, որը **d* բաղաձայնից հետո օրինաչափ կերպով տվել է սաճսկ. i, նախորդող **u* և **ṛ* վանկարար ծայնորդների հետ ձուլվելով տվել է հ.-ե. *uə* > *u* > սաճսկ. *ū* և հ.-ե. *ṛə* > **ṛ* > սաճսկ. *ṛ*: Տվյալ դեպքում մեզ համար կարևոր է սաճսկ. *jajā-thas* երկ. II դ. ձևը: Վերջինս վկայում է այն մասին, որ հ.-ե. *a-*-ն կրկնավոր ներկայի խոնարհման ձևերում չի ընկել առնվազն նախքան *ṛə* > *ṛ* ձուլումը: Նույն բանը հաստատում են նաև հ.-ե. *pie* «լցնել» երկվանկ. արմատից ծագող սաճսկ. կրկնավոր ներկայի, հոգ. I դ. *pipar-mas* և հոգ. II դ. *pipar-thas* ձևերը: Բայց արդյոք կարելի՞ է մտածել, որ հ.-ե. *a-*-ն կրկնավոր ներկայի խոնարհման ձևերում ընկել է *ṛə* > *ṛ*, *ṛə* > *ṛ* և այլն ձուլումից

¹² Այդ մասին հանգամանորեն տես Օ. Szeméni, նշվ. աշխ., էջ 81-87:

¹³ Օրինակների համար տես Т.Елизаренкова, Грамматика ведийского языка, М., 1982, էջ 342, նույնի Ведыский яз. М., 1987, էջ 118, Т.Барроу, նշված աշխ., էջ 320-321:

¹⁴ Stü Ф. де Соссюр, Труды по языкознанию, М., 1977, Мемуары..., էջ 531:

հետո: Կարծում ենք, հենց Բրուզմանի կողմից վկայակոչված սանսկ. *sutiś*, բայց *su-sutiś*, *stīnas*, բայց *ś-stītas* և այլն¹⁵ պարզ : բաղադրյալ կազմություններում հ.-ե. երկար և կարճ վանկարար ծայնորդների հակադրությունը ցույց է տալիս, որ հ.-ե. *ə*-ի անկումը տեղի է ունեցել *ɾ > ʀ*, *uə > u* և այլն ծուլումից առաջ: Ընդ որում վերջին հանգամանքն էլ իր հերթին հաստատում է, որ բայական կրկնությունը իրականում համարժեք չի եղել բարդության առաջին բաղադրիչին (հակառակ դեպքում հ.-ե. վանկարար ծայնորդ + *ə* կապակցությունը երկու դեպքում էլ պիտի տար նույն արդյունքը:

Այսպիսով, վերոհիշյալ լեզվական փաստերը վկայում են այն մասին, որ սանսկ. կրկնավոր ներկայի խոնարհման ձևերում հ.-ե. *ə*-ն չի ընկել, և ըստ այդմ *ɛ/ə*, *ɔ/ə*, *a/ə* հերթագայությունները այդ դեպքում ևս օրինաչափ կերպով նախապես տվել են *a/* հերթագայություն (*jahāṣ* : *jahimas* և այլն), իսկ *dadāṣ* : *dadmas* և այլն ձևերում հանդես եկող *ā/qr*ո հերթագայությունը առաջացել է համաբանության հետևանքով¹⁶:

¹⁵ Sten Brugmann K., *Grundriss...*, Bd. I, էջ 500-501, նույնի *Kurze vergleichende Grammatik...*, էջ 143-144:

¹⁶ Դուռարենում էլ համաբանությունը գործել է հակառակ ուղղությամբ. բաղաձայնով սկսվող վերջավորություններից առաջ ծագած օրինաչափ *ճիծ-* բայաիմքը համաբանությամբ տարածվել է նաև հոգ. III դ. ձևի վրա՝ *ճիծճա* (փոխ. սպասելիք *ճիծա*; ձևի) – Դ.-ե. -դմ-ից ծագած հուն. *ճա* ձևում կարճ *ճ*-ի փոխարեն առկա երկար *ճ*-ի ծագման մասին տես Դ. Ախտրեկ, *Историческая морфология греческого языка*, М. 1953, էջ 256):